

1. ՀՐԱՉՅԱ ՔՈՉԱՐԻՆ

Իմ անգուգական բարեկամ, սիրելի Հրայր Քոչար

Ինչպես պայմանավորվեցինք, «Բանակի տաճարը» ներկայացրի Սուրեն Երեմյանին:¹ Երբ հանձնելու համար զանգահարեցի, նա իսկույն հրավիրեց իրեն մոտ, ասելով, թե «անպայման եկեք». ըստ երևույթին սպասում էր: Պարզվեց, որ նախօրոք մտածել էր ու անմիջապես հայտնեց ինձ իր ցանկությունը՝ աշխատությանը կցել Տայքի հրատարակության պատրաստվող գունավոր քարտեզը, ինչպես և առաջաբան (խմբագրողի կողմից), որն ունի պատրաստ՝ 40 մեքենագիր էջի ծավալով:

Ես հաճույքով ընդունեցի նրա առաջարկը և աշխատությունը թողեցի ավելի հանգամանորեն ծանոթանալու, նախնական կարծիք ստանալու ակնկալությամբ: Ինձ երկար սպասել չտվեց, երկու օր անց ստացա կարծիքը, որի պատճենն ահա ուղարկում եմ (բնագիրը կբերեմ, հենց որ անհրաժեշտ համարեք):

Երբ ես հայտնեցի միտքս՝ աշխատությունը նվիրել մեր ժողովրդի Եղեռնի զոհերի հիսնամյա հիշատակին, նա անհրաժեշտ համարեց արագացնել Մինսկում հրատարակվող վերոհիշյալ քարտեզի տպագրության գործը:

Երեկ, 26/IX 64 թ. Երեմյանին ճանապարհեցի Դիլիջան, նա հանգստանալու և այնտեղ աշխատելու մեկնեց և կվերադառնա հոկտեմբերի 10-ին:

Խոսեցինք նաև նրա անելիքների մասին. պարզվեց, որ գործերը անսահման մեծ են, հապաղելու ժամը չէ, մինչ առողջությունը չի ներում. սիրտն է տկար, ինչպես և գլխացավեր ունի, որ սկսվում են աշխատելուն զուգընթաց: Ըստ երևույթին Դիլիջանում նա իրեն լավ է զգում և արդյունավետ աշխատում: Այստեղ նրան ևս զբաղեցնողները քիչ չեն:

Իմ հաջորդ քայլը անելու համար սպասում եմ խորհրդի:

¹ Ականավոր հայ գիտնական, ակադեմիկոս, պատմաբան և քարտեզագիր (այստեղ և հետագայում բոլոր ծանոթագրությունները կազմողինն են):

Իմ խորին հարգանքը տիկին Հասմիկին:

Ինչպե՞ս վերջացավ անցած կիրակի օրվա նարդու խաղը Վախթանգ Ստեպանիչի² հետ, եթե ներկա է, իմ հարգանքները նրան:

Խորին հարգանքով՝ Տիրան Մարության

27/IX 64 թ.

Հ.գ.

Ես նորերս միայն իմացա, որ Գյոթեի մայրը հայ ընտանիքի ժառանգորդ է. այդ ընդհանրապես հայտնի եղե՞լ է մեր իրականությանը: SU

[Նամակին սևագրին կցված է հետևյալ բանաստեղծությունը]

«Սպիտակ գիրքը», «Կամրջի վրա» և «Ուսուցիչը»

կարդալուց հետո

Իմ բարի, սիրելի Քոչար

Ժխորից հեռու

քո դաստակներում

Որպես երագում,

հուշեր ես թերթում

Հայրենահաված,

ջարդեր, կոտորած...

Այդ թոհուրոհից

դժնի, ահավոր

Ներքին մղումով

² Վախթանգ Ստեփանի Անանյան (1905-1980), ականավոր հայ գրող, լրագրող, արձակագիր (Օ.Կ.):

մի խորհրդավոր
Ընդոստ ավյունով
Սրտի արյունով
Դու հույս ես կերտում,
Դու լույս ես կերտում,
Քո Լուսակերտում:³

³ 1960-63 թթ. Տիրան Մարությանի նախագծով Լուսակերտում կառուցվում է [Հրայրա Քոչարի ամառանոցը](#);

"Ulysses" ...
Simplicity above
for experimental purposes

let's see ...
hurry

Very low temperature,
highly low pressure.

Supply, ...
highly ...

Very ...
...
...
...

...
...
...
...
...

11